

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՎԵՐՇՆՈՏԱՅԻՆ (ՀԱՅՄՈՐՅԱՆ)
ԾՈՑԵՐԻ ԶԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՄԵԾԱՀԱՍՏԱԿ ՊԱՅԻՆՏԻ
ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար N 241-Ն

Տիպ Հրաման

Ակտի տիպ Հիմնական ակտ (10.08.2024-մինչ օրս)

Կարգավիճակ Գործում է

Սկզբնաղբյուր Միասնական կայք 2024.07.22-2024.08.04

Պաշտոնական հրապարակման օրը 31.07.2024

Ընդունող մարմին Առողջապահության նախարար

Ընդունման ամսաթիվ 29.07.2024

Ստորագրող մարմին Առողջապահության նախարար

Ստորագրման ամսաթիվ 29.07.2024

Ուժի մեջ մտնելու ամսաթիվ 10.08.2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«29» հուլիս 2024 թ.

N 241-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՎԵՐՆՈՏԱՅԻՆ (ՀԱՅՄՈՐՅԱՆ) ԾՈՑԵՐԻ ԶԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՄԵԾԱՀԱՍԱԿ ՊԱՅԻՆՏԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետը՝

Հրամայում եմ

1. Հաստատել վերծնոտային (հայմորյան) ծոցերի չարորակ նորագոյացություններով մեծահասակ պացիենտի վարման գործելակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

29.07.2024

Ա. Ավանեսյան

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
«29» հուլիս 2024 թվականի
N 241-Ն հրամանի

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳ

ՎԵՐՆՈՏԱՅԻՆ (ՀԱՅՄՈՐՅԱՆ) ԾՈՑԵՐԻ ԶԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՄԵԾԱՀԱՍԱԿ ՊԱՅԻՆՏԻ ՎԱՐՄԱՆ

1. Նոզոլոգիաների խումբը՝ ըստ հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական 10-րդ վերանայման դասակարգչի.

Հ/Հ	Կոդը	Անվանում
1)	C31.0	Վերծնոտային ծոցերի Վերծնոտային (հայմորյան) ծոցերի

2. Նոզոլոգիաների խումբը կիրառելի է՝ ըստ սույն հավելվածով սահմանված Ձև 1-ի.

Ձև 1

1)	Տարիքային խումբ (նորածին, երեխա, դեռահաս, մեծահասակ)	Մեծահասակ
2)	Սեռ (արական, իգական)	Արական, իգական
3)	Բարդություններ (առանց բարդությունների (ԱԲ), բարդություններով (Բ))	ԱԲ, Բ
4)		T- Առաջնային ուռուցք Tx՝ Առաջնային ուռուցքի չափերը հնարավոր չէ գնահատել Tis՝ Ուռուցք տեղում T1՝ Վերծնոտային ծոցով սահմանափակվող ուռուցք առանց ոսկրերի ախտահարման T2՝ Ուռուցքն ախտահարում է ոսկրերը տարածվելով կարծր քիմք և/կամ միջին քթային անցուղի, բացառությամբ վերծնոտային ծոցի հետին պատն ու թևակերպ ելունները T3՝ Ուռուցքը ախտահարում է հետևյալ շրջաններից որևէ մեկը՝ վերծնոտային ծոցի հետին պատը, ակնակապճի ստորին կամ միջային պատը, թևակերպ փոսը, էթմոիդալ խորշիկները, ենթամաշկային հյուսվածքները

Հիվանդության փուլը
(նկարագրել)

T4` Տեղային տարածված ուռուցք
T4a` Ուռուցքը ախտահարում է ակնակապճի կառուցվածքը, այտի մաշկը, ստորքուկքային փոսուքյունը, մաղոսկրի ծակոտկեն թիթեղը, ճակատային կամ հիմային ծոցերը
T4b` Ուռուցքը ախտահարում է ակնակապճի ամբողջությամբ, կարծրենին, միջին գանգափոսը, գանգուղեղային նյարդերը, քթըմպանը
N- Ռեգիոնար ավշային հանգույցներ
Nx` Ռեգիոնար ավշային հանգույցները հնարավոր չէ գնահատել
N0` Ռեգիոնար ավշային հանգույցներում մետաստազ չկա
N1` Առավելագույն հատույթում մինչև 3.0 սմ չափերի, մեկ համակողմանի (իպսիլատերալ) ավշային հանգույցի մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
N2a` Համակողմանի (իպսիլատերալ)՝ առավելագույն հատույթում մինչև 3.0 սմ-ից մեծ, բայց 6.0սմ-ից փոքր չափերի, մեկ ավշային հանգույցի մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE-)
N2b` Համակողմանի՝ առավելագույն հատույթում 6.0 սմ-ից փոքր բազմաթիվ ավշային հանգույցների մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
N2c` Երկկողմանի կամ կոնտրլատերալ առավելագույն՝ հատույթում 6.0 սմ-ից փոքր ավշային հանգույցների մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
N3a` Առավելագույն հատույթում 6.0 սմ-ից մեծ ավշային հանգույցների մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
N3b` Ցանկացած ավշային հանգույցի մետաստատիկ ախտահարում կլինիկորեն նշանակալի էքստրակապսուլյար աճով (ENE+)

pN- Պարամորֆոլոգիական դասակարգում

pNx` Ռեգիոնար ավշային հանգույցները հնարավոր չէ գնահատել
pN0` Ռեգիոնար մետաստազ չկա
pN1` Համակողմանի (իպսիլատերալ)՝ առավելագույն հատույթում մինչև 3.0 սմ չափերի մեկ ավշային հանգույցի մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
pN2a` Համակողմանի (իպսիլատերալ)՝ մեկ ավշային հանգույցի մետաստատիկ ախտահարում առավելագույն հատույթում 3.0 սմ-ից փոքր և էքստրակապսուլյար աճով (ENE+) կամ առավելագույն հատույթում 3.0սմ-ից մեծ 6.0սմ-ից փոքր, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
pN2b` Համակողմանի՝ առավելագույն հատույթում 6.0 սմ-ից փոքր, բազմաթիվ ավշային հանգույցների մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)
pN2c` Երկկողմանի կամ կոնտրլատերալ՝ առավելագույն հատույթում 6.0 սմ-ից փոքր բազմաթիվ ավշային հանգույցների մետաստատիկ ախտահարում, առանց

Էքստրակապսուլյար աճի (ENE-) pN3a՝ Առավելագույն հատույթում 6.0 սմ-ից մեծ ավշային հանգույցների մետաստատիկ ախտահարում, առանց էքստրակապսուլյար աճի (ENE -)

pN3b՝ Համակողմանի (իպսիլատերալ)՝ մեկ ավշային հանգույցի մետաստատիկ ախտահարում առավելագույն հատույթում 3.0 սմ-ից մեծ և էքստրակապսուլյար աճով (ENE+) կամ համակողմանի երկկողմանի և կոնտրլատերալ էքստրակապսուլյար աճով՝ ցանկացած չափի բազմաթիվ ավշային հանգույցներ (ENE +) կամ կոնտրլատերալ ցանկացած չափի եզակի ավշային հանգույց էքստրանոդալ աճով (ENE +)

M- Հեռավոր մետաստազներ

M0՝ Հեռավոր մետաստազներ չկան
M1՝ Առկա է հեռավոր մետաստազներ

G-Հյուսվածքաբանական չարորակացման աստիճան

Gx՝ Չարորակացման աստիճանը հնարավոր չէ գնահատել
G1՝ Բարձր տարբերակված չարորակ նորագոյացություն
G2՝ Միջին տարբերակման չարորակ նորագոյացություն
G3՝ Ցածր տարբերակված չարորակ նորագոյացություն
G4՝ Չտարբերակված չարորակ նորագոյացություն

Փուլեր	Չափորոշիչ T	Չափորոշիչ N	Չափորոշիչ M
0	TIS	N0	M0
I	T1	N0	M0
II	T2	N0	M0
III	T1-2	N1	M0
	T3	N0-1	M0
IVA	T0-3	N2	M0
	T4a	N0-2	M0
IVB	T0-3, T4ab	N3	M0
	T4b	N0-3	M0
IVC	T1-4	N1-3	M1

5) Բժշկական օգնության և սպասարկման պայմանները (բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային պայմաններում, ցերեկային ստացիոնարի պայմաններում, հիվանդանոցային պայմաններում)

Բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային պայմաններում, ցերեկային ստացիոնարի պայմաններում, հիվանդանոցային պայմաններում

6) Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձևը (շտապ, անհետաձգելի, պլանային)

Անհետաձգելի, շտապ, պլանային

7) Կիրառման շրջանակը

Քիթ-կոկորդ-ականջաբան-ուռուցքաբան, բժիշկ - Էնդոսկոպիստ, ճառագայթային ախտորոշման մասնագետ, ախտաբանական անատոմիայի և կլինիկական մորֆոլոգիայի մասնագետ, քիմիաթերապևտ-ուռուցքաբան, ճառագայթային ուռուցքաբան, սրտաբան,

	(նշել մասնագետների շրջանակը)	թոքաբան, կլինիկական հոգեբան, հոգեբույժ, անոթային վիրաբույժ, լոգոպեդ, նոստրիցիոլոգ, ներգատաբան, նյարդաբան, դիմաձևոտային վիրաբույժ, միկրովիրաբույժ, վարակաբան, ռևմատոլոգ, որովայնային վիրաբույժ
8)	Գանձատներ	ա. առանց գանձատների բ. գանձատների առկայությամբ՝ քթային շնչառության դժվարացում/ բացակայություն, ծանրալսություն, փակ ռեզախոսություն, ծանրության զգացում դեմքի շրջանում, գլխացավ, քթային արյունահոսություն, արտադրություն քթի խոռոչից, դեմքի և արտաքին քթի ուրվագծերի ձևախախտում, պարանոցի շրջանում ուռուցքային գոյացությունների առկայություն, երկտեսություն
9)	Անամեզ	Պաթոգնոմոնիկ ախտանշաններ առկա չեն
10)	Չննման արդյունք/Ցուցում	Ուռուցքային գոյացության հայտնաբերում, լաբորատոր-ախտորոշիչ կլինիկական հետազոտությունների արդյունքների հետ համադրում
11)	Հոսպիտալացման ցուցում	Պլանային վիրահատություն, պլանային քիմիաթերապիա, պլանային/շտապ ճառագայթային թերապիա, կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում շտապ հոսպիտալացում վիրաբուժական և/կամ ինտենսիվ թերապիայի բաժանմունք, ախտորոշման ճշտում, այդ թվում զննում ընդհանուր անզգայացման պայմաններում

3. Բժիշկ-մասնագետի կողմից պացիենտի զննումը, խորհրդատվությունը իրականացվում է ըստ Ձև 2-ի (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը)։

Ձև 2

Հ/հ	Խորհրդատվության տեսակը	Տրամադրման քանակը	
		ԱԲ	Բ
1)	Տվյալ նոզոլոգիական խմբում խորհրդատվությունների քանակը, բնույթը և ընդգրկված մասնագետների քանակը դիտվում է յուրովի և կախված է տվյալ կլինիկական դեպքի նրբությունների և/կամ ուղեկցող նոզոլոգիական խմբերի առկայությունից և/կամ բացակայությունից	1	1

4. Սույն հավելվածի Ձև 2-ում նշված տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ զննման, խորհրդատվության իրականացման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ զննման, խորհրդատվության իրականացման հաճախականությունը:

5. Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են՝ ըստ Ձև 3-ի (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը)։

Ձև 3

Լաբորատոր հետազոտություններ					
Հ/Հ	Կոդը	Անվանումը	Տրամադրման քանակը		Արդյունք
			ԱԲ	Բ	
1)		Արյան ընդհանուր և բիոքիմիական հետազոտություններ, կոագուլոգրամմա, էլեկտրոլիտներ, արյան խումբ, սերոլոգիական	1	1	

	Առկա չէ	հետազոտություն, SCC` տափակ բջջային կարցինոմայի անոթգեղ			Շեղումների հայտնաբերում
2)	Առկա չէ	Քսուկի/քերուկի բջջաբանական, բիոպտատի/պրեպարատի հյուսվածքաբանական հետազոտություն, իմունոհիստոքիմիական հետազոտություն (այդ թվում AE1/3, beta catenin, CD45, CD99, CDX2, chromogranin, CK5/6, CK7, CK20, EBER1, EMA/MUC1, HPV, INI1, myogenin, NUT, p16, p40, S100, SMA, SOX10, synaptophysin)	1	1	Ուռուցքի հյուսվածքաբանական տեսակի ճշտում
Գործիքային հետազոտություններ					
3)	Առկա չէ	Պոլիօրգան համակարգչային տոմոգրաֆիա` ն/ե կոնտրաստավորմամբ	1	1	Ճառագայթային ախտորոշիչ հետազոտություններով պարզաբանվում է պրոցեսի տարածվածությունը, ավշային հանգույցների ընդգրկվածությունը
4)	Առկա չէ	Պոզիտրոն-էմիսիոնային տոմոգրաֆիա` ըստ ցուցման	1	1	
5)	Առկա չէ	Գերձայնային հետազոտություն` ըստ ցուցման	1	1	
6)	Առկա չէ	Գլխի միջուկամագնիսային- ռեզոնանսային տոմոգրաֆիա` ն/ե կոնտրաստավորմամբ, այլ հատվածների միջուկամագնիսային- ռեզոնանսային տոմոգրաֆիա` ըստ ցուցման	1	1	
7)	Առկա չէ	Ռենտգենաբանական հետազոտություն	1	1	
8)	Առկա չէ	Գերձայնային հետազոտություն կամ համակարգչային տոմոգրաֆիա` ուղղորդված տրեպան բիոպսիայով (ըստ ցուցման)	1	1	
9)	Առկա չէ	Օստեոսցինտիգրաֆիա	1	1	
10)	Առկա չէ	Համակարգչային տոմոգրաֆիա- տոպոմետրիա	1	1	

6. Սույն հավելվածի Ձև 3-ում սահմանված տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ հետազոտության իրականացման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ հետազոտության իրականացման հաճախականությունը:

7. Օգտագործվող դեղերի ցանկը սահմանվում է ըստ Ձև 4-ի (անհրաժեշտության դեպքում նշել հիվանդության փուլերը):

Ձև 4

					Միջի- նացված ցուցա- նիշ`	Մի-ջին օրա-	Բուժ- ման	Օրե-
--	--	--	--	--	-----------------------------------	----------------	--------------	------

Հ/հ	Անվանում, դեղաչափ, դեղաձև, փաթեթավորում	Անվանում /քենտրիկ/	Զ/Մ	տրամադրման հաճախականություն	կանչափաքանակ	կուրսի միջին չափաքանակ	րիքանակ
1)	Ցիսպլատին խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 0,5մգ/մլ	Ցիսպլատին խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 0,5մգ/մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	100 մգ	150 մգ	4-6ամիս
2)	Կարբոպլատին խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 10մգ/մլ	Կարբոպլատին խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 10մգ/մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	600մգ	750մգ	4-6ամիս
3)	Պակլիտաքսել պակլիտաքսելխտանյութ կաթիլաներարկման լուծույթի 100մգ/16.7մ, 30մգ/5մլ, 6մգ/մլ,	Պակլիտաքսել պակլիտաքսելխտանյութ կաթիլաներարկման լուծույթի 100մգ/16.7մ, 30մգ/5մլ, 6մգ/մլ,	սրվակ	21 օրը 1 անգամ	300 մգ	350մգ	4-6ամիս
4)	Դոցետաքսել (դոցետաքսելի տրիհիդրատ) խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 20մգ/մլ	Դոցետաքսել (դոցետաքսելի տրիհիդրատ) խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 20մգ/մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	150 մգ	180մգ	4-6ամիս
5)	Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված կաթիլաներարկման լուծույթի 1000մգ	Գեմցիտաբին (գեմցիտաբինի հիդրոքլորիդ) դեղափոշի լիոֆիլացված կաթիլաներարկման լուծույթի 1000մգ	սրվակ	21 օրը 1 անգամ	2000 մգ	4000մգ	4-6ամիս
6)	5 Ֆտորուրացիլ լուծույթ ներարկման/ կաթիլաներարկման 250մգ/5մլ, 500մգ/10մլ	5 Ֆտորուրացիլ լուծույթ ներարկման/ կաթիլաներարկման 250մգ/5մլ, 500մգ/10մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	1500 մգ	5000 մգ	4-6 ամիս
7)	Կապեցիտաբին 500մգ	Կապեցիտաբին 500մգ	դեղահատեր	21 օրը 1 անգամ	6 հաբ 3000մգ	85 հաբ 42500մգ	4-6 ամիս
8)	Էտոպոզիդ լուծույթ ներարկման/ կաթիլաներարկման 100մլ/5մլ	Էտոպոզիդ լուծույթ ներարկման/ կաթիլաներարկման 100մլ/5մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	200 մգ	600 մգ	4-6 ամիս
9)	Ցիկլոֆոսֆան լուծույթ մ/մ/ և ն/ե ներարկման լուծույթի 10մգ/2մլ,	Ցիկլոֆոսֆան լուծույթ մ/մ/ և ն/ե ներարկման լուծույթի 200մգ	22իկ	21 օրը 1 անգամ	1000 մգ	1500 մգ	4-6 ամիս
10)	Վինկրիստին լուծույթ մ/մ/ և ն/ե ներարկման լուծույթի 1մգ/0,5մլ, 1մգ/1մլ	Վինկրիստին լուծույթ մ/մ/ և ն/ե ներարկման լուծույթի 1մգ/0,5մլ, 1մգ/1մլ	22իկ	21 օրը 1 անգամ	2մգ	2մգ	4-6 ամիս
11)	Դոքսոռուբիցին (դոքսոռուբիցինի հիդրոքլորիդ) խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 2մգ/մլ	Դոքսոռուբիցին (դոքսոռուբիցինի հիդրոքլորիդ) խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 2մգ/մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	80մգ	100 մգ	4-6 ամիս
12)	Նիվոլումաբ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 10մգ/1մլ	Նիվոլումաբ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 10մգ/1մլ	սրվակ	2-3 շաբաթը 1անգամ	200 մգ	200 մգ	6-12 ամիս
13)	Պեմբրոլիզումաբ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 50մգ/1մլ, 100մգ/4մլ	Պեմբրոլիզումաբ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 50մգ/1մլ, 100մգ/4մլ	սրվակ	21 օրը 1 անգամ	200 մգ	200 մգ	6-12 ամիս
14)	Ցետուքսիմաբ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 2մգ/մլ	Ցետուքսիմաբ խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 2մգ/մլ	22իկ	21 օրը 1 անգամ	400 մգ	800մգ	6-12 ամիս

8. Սույն հավելվածի Ձև 4-ում սահմանված`

1) նշանակված դեղի նկատմամբ անհատական անտանելիության դեպքում ավագ

բուժաշխատողը իրավասու է նշանակել այլ դեղ.

2) տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ դեղի օգտագործման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ դեղի օգտագործման հաճախականությունը:

9. Բուժական այլ միջոցառումներ սահմանվում են Ձև 5-ում (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը).

Ձև 5

Հ/հ	Բժշկական ծառայության տեսակը	Տրամադրման քանակը	
		ԱԲ	Բ
1)	ա. հայմորրոտոմիա, էթմոիդոտոմիա, ռինոտոմիա՝ գոյացության լայն բացազատմամբ, բ. ռեզինար ավշային հանգույցների հեռացում (արմատական կամ սելեկտիվ լիմֆոդիսեկցիա), գ. էքսցիզիոն բիոպսիաներ, դ. հետվիրահատական բարդությունների վիրաբուժություն, ե. վերականգնողական բուժում (այդ թվում վիրաբուժական՝ ռեկոնստրուկտիվ և պլաստիկ), զ. մետաստատիկ օջախների աբլատիվ բուժում, քիմիոէմբոլիզացիա, է. հեռահար բուժական/պալիատիվ ճառագայթային բուժում ը. բրախիթերապիա:	1	1

10. Սույն հավելվածի Ձև 5-ում սահմանված տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով, թե ինչ հաճախականությամբ է իրականացվում տվյալ բուժական միջոցառումը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ բուժական միջոցառման կիրառման հաճախականությունը:

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

1. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142864>
2. Ուռուցքների դասակարգում՝ TNM 8-th edition
3. <https://www.nccn.org/>

Պաշտոնական հրապարակման օրը՝ 31 հուլիսի 2024 թվական: